ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

01 ապրիլի 2015թ. թիվ 180-Ֆ

ՀՐԱՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության 14-րդ կետի 4-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168 Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 97-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պայմանագրի կատարման վերաբերյալ եզրակացության ձևը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՖՆ 001717

Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2015 թվականի ապրիլի 1-ի N 180- Ն հրամանի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

,,_____,,_____,, 20 ___ թ.
Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,,____,,_____,, 20 ___ թ.
Պայմանագրի համարը _____
Պատվիրատուի անվանումը _____
Պայմանագրի կողմի անվանումը _____
Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում պայմանագրի կողմն իրականացրել է հետևյալ աշխատանքները (մատակարարումներ, ծառայություններ)՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների					
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը	
			ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	փաստացի

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

_____
_____
_____
_____
_____
_____

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(դրական/բացասական)

,,____,,_____,, 20___ թ. Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ ՝ _____
անուն-ազգանուն, ստորագրությունը

Ընդ որում հավելվածով սահմանված՝ պայմանագրի կատարման վերաբերյալ եզրակացության ձևը լրացվում է հետևյալ կերպ՝

1. Սյունակի <<քանակական ցուցանիշը ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի>> բաժնում լրացվում է պայմանագրով նախատեսված և տվյալ ժամանակահատվածում ձեռք բերման ենթակա ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշը:

2. Սյունակի <<քանակական ցուցանիշը փաստացի>> բաժնում լրացվում է տվյալ կայացված ժամանակահատվածում պատվիրատուի ընդունմանը ներկայացված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշը:

3. Սյունակի <<Կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի>> բաժնում նշվում է տվյալ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար պայմանագրով սահմանված ժամկետը:

4. Սյունակի <<քանակական ցուցանիշը փաստացի>> բաժնում լրացվում է տվյալ ժամանակահատվածում պատվիրատուի ընդունմանը ներկայացված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների քանակական ցուցանիշը:

5. Կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և մատակարարված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին համապատասխանելու դեպքում <<Նշումներ անհամապատասխանությունների մասին>> բաժնում լրացվում են միայն հետևյալ բառերը՝ <<անհամապատասխանությունները բացակայում են>>, հակառակ դեպքում մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:

6. Սույն եզրակացությունը կազմելիս վերջինիս լրացմանը վերաբերվող կետերը օրինակելի ձևից հանվում են: